

Բ Ա Ջ Մ Ա Վ Է Պ

ՀԱՆՐԱՊԵՏԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԳԻՏԱԿԱՆ - ԲԱՐՈՑԱԿԱՆ

1843 - 1955

ՃԺԳ. Տ Ա Ր Ի



ՅՈՒՆԵՍՈ - ՅՈՒՆԵՍՈ

ԹԻՒ 6-7

ՍՏԵՓԱՆՈՍ ՌՈՇՔԵԱՆԻ ԲԱՌԱՐԱՆԸ

(ԲՆՆԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ ՄԸ)

Հայկական Ճեմարանին մէջ կատարուած բանախօսութիւն մըն է հետեւեալ ուսումնասիրութիւնը, որով յօդուածագիրը նպատակ ունի զոհարարութեամբ տալու Բագմավկայի կարգ մը ընթերցողներուն, որոնք նամակով խնդրած էին լուսարանութիւններ այս նիւթին շուրջ: Բանախօսութիւնը տեղի ունեցաւ Մայիս 8-ին:

ՍՏԵՓԱՆՈՍ ՌՈՇՔԱ ԺԷ-ԺԸ դարու զէմը մ'է, որուն անունին հետ կապուած են Հայ-Լատին և Լատին-Հայ բառարաններ: Այդ գործը կոչուած իրմէ « ԳԱՋ ՀԱՅՈՅ ԼԵԶՈՒԻ », և ուրիշներէ ՍՏԵՓԱՆԵԱՆ ԲԱՌԱՐԱՆ, քիչ ծանօթ է բանասիրութեան, մնացած ըլլալով անտիպ:

Բառարանին ձեռագիր բնագիրը կը պահուի Վիեննայի Միթրարեան հայրերու մատենադարանին մէջ և կը կրէ 6 թիւը ձեռագիրներու շարքին մէջ:

Ո՛վ է Ստեփանոս Ռոշքա, ինչ է իր ձեռնարկին նպատակը, ինչո՞ւ էր գործը մնացած է անտիպ. ինչ է անոր արժէքը, ծաւալը. հարցեր են՝ որոնք բնականաբար կը ծնանին քննողին մտքին մէջ: Այս հարցերուն պատասխանելու համար է ահա, որ հոս համառօտիւ մը ուզեցինք մօտենալ այդ գործին:

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԳԻՅԵՐ

Բագմավկայ ԽԳ, 1885, թիւ 7-9, էջ 247, կու տայ կենսագրական կարճ տեղեկութիւններ: Ստեփանեան Ստեփան, կամ Ստեփանոս Ռոշքա, և կամ Ստեփանոս Լեհացի, ծնած է Փոտոլիոյ կամենից քաղաքը, 28 Մարտ 1670-ին: Ղրկուած է Հոռոմ և Ծաւալոցի վարժարանին մէջ հետեւած է իմաստասիրական և աստուածաբանական ուսումներու: Ստացած է վարդապետ իմաստասիրութեան և Աստուածաբանութեան տիտղոսները, և ձեռնադրուելով քահանայ՝ վերադարձած է Փոտոլիա: Ուշիմ, հոգեսէր երիտասարդ, փայլուն ասպարէզի մը կոչուած էր: Յանձնարարական նամակ մ'ունէր ձեռքը, տրուած իրեն՝ Ս. Աթոռէն, տանելու Լեհաստանի Նուիրակին, զիւրացնելու իր մուտքը եկե-